# ԱՐԱՐԱՏ

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Դ. — ՇՐՋԱՆ Ը. **1875** ՏԱՐԻ Է. — ԱՊՐԻԼ 30


## ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԱԾՉԱՑ, ՈՒՐԱՑՈՂԱՑ, ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ ԵՒ ԲԱԺԱՆԵԼՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՀԱՅՈՑ

(Շարունակութիւն)

ՅՕԴ. Ժ.

### Յազկերտ Բ. Թագաւոր Պարսից հալածող Հայոց՝ ամս 17:

(Ամք Տեառն. 440)։ Յազկերտի երկրորդի Պարսից արքայի որդւոյ երկրորդն Վռամայ թագաւորեալ զգահին հօր իւրում, իսկ և իսկ դիմէ ի վերայ զօրացն Յունաց ի Մծբին ըստ Խորենացւոյն՝ մոռացեալ զհաշտութիւն հայրենի, և յարշաւանս հասուցանէ աշխարհի մերում զգունդն Ատրպատականի. զի նորա ի սըրտի էր ոխերիմ թշնամութիւն ընդ քրիստոնեայս, որով յարոյց անհնարին տառապանս հալածանաց ի վերայ ազգի Հայոց, որով սա առաւել գտաւ առ ազգ մեր ըստ դժնէութեան բարուցն՝ քան զամենայն թագաւորս Պարսից, որ երևեցան անհաշտ թշնամի քրիստոնական հաւատոց, յամենայնի զանձն տուեալ գործակից սատանայի, որպէս ասէ սուրբ Եղիշէ.

«Զոր եգիտ բանսարկու իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի նա. և ելից զնա իբրև զպատական դարան դեղեալ նետիւք, և սկսաւ եղջեւր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի. և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր զհաւատացեալսն ի Քրիստոս և նեղէր տագնապէր անխաղաղաւէր կենօք. քանզի յոյժ սիրելի էր նմա խըռովութիւն արեանհեղութեան։ Վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, թէ յո՞ թափեցից զթոյնս դառնութեան կամ ո՞ւր բացատեցից զբազմութիւն թունաւոր նետիցն։»

Զայս ամենայն թունաւորէր ի սիրտս Յազկերտի մեծ հազարապետ նորա Միհրներսեհ, և հանապազօր խրատեալ յորդորէր զնա ըստ Փարպեցւոյն, մինչև առաւել ևս յուզեալ Յազկերտի՝ հաստատեաց ի մտի, իսկ և իսկ ստիպել զքրիստոնեայս ամենայն որ ընդ իւրով իշխանութեամբ՝ ի կրօնս մոգութեան. և փութապէս յետ արշաւանաց նորա ի Մծբին, ի վերայ Յունաց, հրաման եհան յաշխարհ տէրութեան իւրոյ ստիպել ըզ-

քրիստոնէայս բնակեալս անդէն ի պաշտօն կրակի և արեգական, զամենայն սպառնալեօք ահացուցանէր խախտել ի հաւատոց, և զայլս ի բանտ և ի կապանս մատնէր և սրոյ մահուամբ փոխանէր. և առ հասարակ «Մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան, բայց սակայն (ասէ Եղիշէ) ոչ ինչ կարացին բեկանել զհաստատուն արութիւն ոգւոյ քաջ նահատակացն, քանզի կամակար ընթանային ձեռամբ ցանկացեալք համանիլ մահու, որով կեանք անմահութեան հանդերձի (442 Թ.)։

Իսկ իբրև Վարազվաղան Սիւնի փեսայ Վասակայ Սիւնւոյ յատելութեանց աներոյն իւրոյ առ ինքն՝ գնացեալ ի Պարս առ Միհրներսեհ, ի նորին հրապուրանաց դարձաւ ի պաշտօն կրակի թողլով ըզքրիստոնէական հաւատս, ապա ինքն հազարապետն և ևս սկսաւ դրդուել զթագաւորն առնել ընդդէմ Հայոց. այլ առաջի եդեալ մոգուցն՝ եթէ բռնութեամբ ոչ փճանեցին իրք որպէս և յաշխարհին իւրում ի քրիստոնէայս, մինչդեռ մեծամեծք աշխարհին և պատերազմող զօրք են ի Հայաստան, ապա ի չորրորդ ամի թագաւորութեան իւրում գրեաց Յազկերտ հրովարտակ և առաքեաց դեսպանս որպէս յաշխարհ ամենայն տէրութեան իւրոյ, նմանապէս և նախ առ Վասակ Սիւնի, կացուցեալ զնա Մարզպան աշխարհին Հայոց, ահն ունելով [illegible] զնա յօրէնս Պարսից։

Եւ հրովարտակն էր այսպիսի ինչ, ըստ յառաջ բերելոյն Եղիշէի ի գլ. Ա. 9. «Ամենայն ազգս տէրութեան իմոյ արեաց և անարեաց բազմասցի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք և մեք մեզէն ողջ եմք զձեզ օգնականութեամբ։ Առանց ինչ զձեզ աշխատ առնելոյ՝ խաղացաք գնացաք յերկիրն Յունաց. և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն ի ծառայութիւն մեզ. դուք բարի զմտաւ ածէք և անսպառ լերուք յուրախութեան. բայց զայս բանս կատարեցէք վաղվաղակի զոր ասեմ։ Մեք ի միտ եդաք անվրէպ խորհրդով գնալ յաշխարհն արեւելից աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց (Հեփթաղեանց այս ինքն Հոնաց), դուք իբրև զհրովարտակս զայս տեսանիցէք, անխափան վաղվաղակի այրուձի գումարեցէք առաջ քան զիս և յանդիման լինջիք ինձ յԱպար աշխարհի։

Ընկալեալ Հայոց զայս պատուէր հըրամանին Յազկերտի, ընդդիմանալ ոչ իշխեցին. այլ գունդ մեծ արարեալ ի զօրացն Հայոց հանդերձ բազում նախարարօք և ուխտիւք Եկեղեցւոյ առաքեցին յԱպար աշխարհ. յորս էին և Առամ Գնունի և Մանաճիհր Ռշտունի. և գնացեալ անդանօր՝ յանդիման եղեն Յազկերտի (443 Թ.)։

Զնոսա Յազկերտի յետ զամս իբրև եօթն յապաղեցուցանելոյ ընդ այլ քըրիստոնէից ի պատերազմունս Հոնաց և չարաչար մղելոյ զնոսա ի գործավարութիւն շինից բերդին ի դուռն Ալանաց, և յետ քանիցս անգամ փոփոխակի ածելոյ անդր զզօրս Հայոց, ապա ի մետասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ, առ որսալոյ ի կամս իւր զքրիստոնեայս՝ ձեռն էարկ կապեաց զնախարար ոմն մանկագոյն զԳարեգին ի տոհմէ Արուանձեանց յաղագս զի-

րաց հաւատոյ. ընդ որ զչարեալ Ատոմայ Գնունւոյ եւ Մանաճհրի Ռշտունւոյ, եւ տեսեալ թէ այնուհետեւ հանդերձեալ է Յազկերտ ստիպել եւ զինքեանս յուրացութիւն հաւատոյ, հանդերձ զօրօք իւրեանց մեկնեցին զանխուլ ի տեղւոջէն (445—9 թ.):

Զփախուստ սոցին լուեալ Յազկերտի, առ ի չզայրացուցանել զխռով զօրականացն Հայոց առ ինքն, թուղթ ողոքական գրէ [1]) առ Ատոմ եւ առ նորին ընկերս, եւ արձակէ պատգամաւորս առ նոսա մինչեւ ցմէջ սահմանակցութեան աշխարհին Հայոց եւ Պարսից. որոց ընկալեալ զպատգամս Յազկերտի, եւ յայտնի գիտացեալ զհնարս նենգութեան, ոչ անսացին պատգամաւորին, այլ յետս ընդ կրունկն դարձուցին զնա ծանուցեալ զհօգւոյ վտանգն: Այլ իբրեւ Յազկերտ գունդ մի սուսեր առաքեաց առ Ատոմեանս յետ դարձի պատգամաւորին՝ մահու սպանանել զնոսա յոչ անսալն նոցա ի վերադառնալ, նոքա անկանին յաշխարհն Վասպուրական ի կողմանս Անձեւացեաց յանապատ տեղիս. ուրանօր եւ ի կրօնաւորէ յումեմնէ սրբոյ ընկալեալ զյայտնութիւն՝ եթէ հանդերձեալ են մարտիրոսանալ, եւ տեսիլ եւս առ այս ետես Ատոմ. եւ պատմեալ ընկերացն, ցնծութեամբ սրտի կացին յաղօթս, երանեալ անձանց, զի փոխանակ պատժելոյ յերկրաւոր եւ ի բռնաւոր թագաւորէ, պսակիմք յերկնաւորէն:

Յայսմիկ ուրախութեան սոցին՝ հասին Պարսիկք ի վերայ. եւ իբրեւ ընթանային իւրեանց պատերազմիլ ընդ նոսա, տեսիլն առաջին կրկնեցաւ առ ամենեսին. ըստ որոյ եւ զէնընկեցս կացին առաջի Պարսից. եւ յետ բազում ստիպմանց նոցա յուրացութիւն հաւատոյ, սոքա հաստատուն հաւատով եւ ուրախութեամբ ի Քրիստոս՝ մատնեցին զանձինս իւրեանց ի մահ:

Յետ այսորիկ Յազկերտի զգուշացեալ սակս քրիստոնէից ի բանակին՝ զի մի եւ այլք փախիցեն, յայտնի հրաման եհան առ նոսա սպառնացմամբ մահուան եւ սրոյ՝ դառնալ ամենեցուն յարեւապաշտութիւն: Այլ քանզի առաջի կայր նմա պատերազմ ընդ Հոնաց, եւ տեսանէր եւս զպնդութիւն հաւատոյ նոցին, քաղցրութեամբ վարել ընկաւ ընդ նոսա, զի մի լքցին ձեռք նոցա ի պատերազմելոյ. որով եւ խոստանայր նոցին բազում պարգեւս եւ զազատութիւն յետ յաղթութեան թշնամւոյն:

Այլ իբրեւ յաջողեցաւ նմա գործ պատերազմին, ապա զոր խոստացեալն էր քրիստոնեայ զօրաց ի բանակին, զհակառակն եցոյց. զի վերստին հրաման եհան՝ երկիրպագանել միայն արեգական եւ հրոյ, եւ յանձն առնուլ զամենայն օրէնս մոգութեան. բայց եւ այնպէս տեսեալ, եթէ ոչ յանձն առնուն քրիստոնեայք զպատուէր նորա, մատնեաց ի տանջանս ի կարգէ առաջացն Հայոց զչորս զօրականս, եւ եդ զնոսա

(1) Հրաման Յազկերտի ունէր օրինակ զայս առ Ատոմեանս եւ առ ընկերս նոցա. «Յազկերտէ յաստուածոց հաւատարէ՝ յՄզդայից արքայէ առ սիրելի ծառայսդ առ ազատդ եւ առ ամենայն հեծելազօրդ Հայոց. որ ի մարզէ աստի մեկնեցայք, ողջոյն հասցէ ի մերմէ տէրութենէս. Յիշեցաք զվաստակս ձեր եւ զքաջութիւն որ առ թշնամիս մեր, եւ կամիմք մեծաւ պատուով շնորհութեամբ արձակել զձեզ յաշխարհս ձեր. զի տեսեալ եղբարցն ձերոց՝ առաւել փութասցին ի մեր ծառայութիւն. միայն զի փութով հասանիցէք առ մեզ.»

ի բանտի, յայլ պատճառս տալով զբանտարկութիւնն, զի մի՛ Հայք տեսեալ եթէ վասն հաւատոյ տանջէ ի նոցանէ, ի ձեռն տացին զքաջութիւն իւրեանց։

Նաև յընթերս տալ Յազկերտի մեծամեծացն քրիստոնէից՝ ածեալ առաջի նոցա զզոհեալ՝ ջանայր հաւանեցուցանել զնոսա յուտել. այլ իբրև ոչ յանձն առին նոքա, զառնացեալ ի սրտի իւրում, եղ արտաքս, և արգել զամենեսին զնոսա ի ներքս՝ կապեալ զձեռս նոցա յետս. և ի բազում նեղութեան պահէին զնոսա զաւուրս քանի մի, և ազգի ազգի տանջանօք չարչարէին զնոսա, ''զոր և ոչ ընդ գրով իսկ արկանել արժանի համարեցաք,, ասէ Եղիշէ։ Նաև ի վերայ այսր ամենայնի՝ ի քաղց և ի ծարաւ և յանձկութիւն նեղէր զնոսա. այլ նոքա առ սէրն Քրիստոսի խնդութեամբ ընդունէին զամենայն. ընդ որ և հեթանոսաց զարմացեալ և ի գութ ի վերայ նոցա շարժեալ, յորդորէին զնոսա հաստատուն կալ յայնպիսի հաւատս. ''լաւ իցէ, ասեն մարդոյ մահու չափ ճգնել՝ քան յայդպիսի օրինաց ուրանալ,,։

Բայց զի յամենայնի յայսոսիկ ոչ կարաց զմիտս նոցա շրջել ի կամս իւր, ապա արձակեալ զնոսա ի կապանաց՝ վարանէր հանապազ հնարիւք մոլորեցուցանել զնոսա ի հաւատոց. և առ այս իսկ կամելով զառաջինն զբուն աշխարհն Հայոց նեղել և տառապեցուցանել, զի և ընդ իւր եղեալքն լուեալ զդարձ աշխարհին՝ դարձցին յօրէնս Պարսից, առաքեաց յաշխարհս մեր զմին ի հաւատարիմ պաշտօնէից իւրոց՝ Դենշապուհ անուն։

Ա՛ռ վասն զի պատուէր առեալ էր ի Յազկերտէ, ըստ Թուելոյն Եղիշայ՝ նախ ի համար արկեալ զմիայնակեացս անինչս՝ որք բնակեալ էին յանապատս և ի վանորայս, էառ և վասն նոցա հարկս, ևս և վասն եպիսկոպոսաց և երիցանց։ Երկրորդ՝ զամենայն եկեղեցիս, որք ազատ էին ի հարկաց, էարկ ընդ հարկաւ։ Երրորդ՝ զհասարակական հարկ աշխարհին առաւել ևս ծանրացոյց. և էառ հասս վասն դաշտաց, լերանց ևն։ Չորրորդ՝ էարկ բանտարկութեամբ խռովութիւն մեծ ի նախարարս, և ի տունս մեծամեծաց՝ սոյնպէս, որով լցաւ աշխարհս աղմկայոյզ շփոթութեամբ։ Հինգերրորդ՝ զմեծ հազարապետն զամենեցուն բարերարն զՎահան Ամատունի՝ սուտ զրպարտութեամբ ընկեց յիշխանութենէ, և եդ ի վերայ Հայոց զՊարսիկ վերակացու և զմոգպետ մի ընդ նմա իբր դատաւոր աշխարհին. այլ յետ այսոցիկ ամենայնի իբրև ոչ կարաց Դենշապուհ առնել զոր կամէրն, ծանոյց զամենայնն Յազկերտի։

Զայս թուղթ Դենշապհոյ առեալ Յազկերտի, և իմացեալ զհաստատութիւն հաւատոց նոցին ի Քրիստոս, ևս և զարհամարհել հրամանին իւրոյ ի նոցունց, խորհրդով մեծամեծաց իւրոց ետ գրել մոգպետին զաղանդ գլխին իւրեանց ի բերանոյ հազարապետին իւրում Միհրներսէհի մեծի. զի յղեսցէ ի Հայս, կարծելով, եթէ գուցէ Հայք հաւանեալ այնմ, դարձցին, կամ չկարելով պատասխանել այնմ, պարտաւորեսցին. ընդ նմին և գրեաց հրովարտակ առ ամենայն Հայս՝ թողուլ զքրիստոնէութիւն և դառնալ յօրէնս Պարսից. զորոյ օրինակն ունի Փարպեցին, յԲ. հատոր. Չամչեան. եր. 25։ Այլ թէ քանի առասպելեալ էր այն թուղթ աղան-

դոյ, առաջի կայ ընթերցողաց ի գիրս Եղիշէի. գլ. Բ. եր. 23–25։

Հասեալ նամակաց ի ձեռս Յովսէփ Կաթուղիկոսի Հայոց, փութանակի գրգռեաց առ ամենայն եպիսկոպոսունս աշխարհին Հայոց գալ ժողովել յԱյրարատ յարքունական քաղաքն Արտաշատ. որպէս գրեալ է մեր ի Ժէրս Ժողովոց՝ ի 5րդ համար գրոցս, և Նախարարք և Աւագք և Սեպուհ Իշխանք աշխարհին ժողովեալ առ սուրբ Կաթուղիկոսն յամի Տեառն 450, և ընթերցեալ զգիր աղանդոյն և հրովարտակ արքունի, հրաման եւտուն Ժողովոյն գրել առ Թագաւորն ի բերանոյ ամենեցուն համարձակ բանիւք. յորում յետ բազում բանից՝ ասեն. «Բայց այս և եթ ձեզ ի հաւատոյս մերոյ յայտնի լիցի. զի տարերց ոչ ծառայեմք, արեգական և լուսնի, հողմոց և կրակի, որպէս դուքդ, և բազում աստուածոցդ, զոր անուանէքդ դուք ի յերկրի և ի յերկինս, պաշտօն ոչ մատուցանեմք. քանզի ուսաք, և հաստատեալ ծառայեմք միումն միայնոյ ճշմարտին Աստուծոյ՝ որ արար զերկինս և զերկիր, և զամենայն ինչ որ ի նոսա. և նա միայն է անուանեալ՝ ի ձէնջ աստուածոցդ՝ Աստուած և արարիչ, Թագաւոր Թագաւորաց և տէր տէրանց. և նմա միայնոյ վայել է ամենայն բանաւորաց մատուցանել երկրպագութիւն և պաշտօն,,։

Ըստ սմին օրինակի պատասխանի առնեն և բանից աղանդոյն առ հազարապետն տալով զամենայնն՝ և զԹուղթն առ հազարապետն իսկ առաքեն յաշխարհն Պարսից. ընդ որս զամօթի հարեալ ամենեքին՝ և աղանդապետն իսկ նոցին դառնացեալ ընդ այն, առաւել քան զինքն զանոնցայց զԹագաւորն. և յայլ խորհուրդ շրջեալ զնա, եւտ գրել Թագաւորին առ ամենայն նախարարս Հայոց ածել ի դուռն, որպէս զի բռնութեամբ երկրպագանել տացէ արեգական։ և հրոյ. այլ ոչ որպէս օրէն էր արքայից Պարսից՝ գրեցաւ հրովարտակն ծանր և գայրագին բանիւք. յանուանէ զմեծամեծ նախարարս աշխարհին նշանակեալ՝ զորս ինքն ճանաչէր. որոց և անուանք յառաջի դնին ի գիրս Եղիշէի՝ Թուովք տասն։

Ըստ այսմ հրամանի նախարարք հասեալ ի դուռն արքային և անդ յետ բազում անգամ յանդիմանութեանց նոցին յերեսաց նորա և բազումս գիմադրաւ լինելոյ նոցին ի պատասխանիս հաւատոյ՝ արկանին ի բանտ և պարտաւոր արձակեալ զան վերստին յաշխարհ Հայաստան. որովք և հաստատունքն ի հաւատս՝ յարդարեն զայն պատերազմն մեծ՝ անուանիս քաջ զօրավարին Վարդանայ՝ ընդ զօրացն Պարսից բիւրաւորաց՝ վասն հաւատոյ և պաշտպանութեան եկեղեցւոյն Քրիստոսի և ազգի և հայրենեաց. զորոց զհանգամանս լիօրէն եդեալ է մեր ի վարս Նահատակաց եկեղեցւոյն Հայոց։

Յետ մեծի պատերազմին՝ որ ամ մետասաներրորդ էր հալածանաց Յազկերտի ի վերայ Հայոց, տեղեկացեալ ի Մուշկան Նիւսալաւուրտն զօրավարէ իւրմէ զամենայն անցս մեծի պատերազմին և զիւրաքանչիւր նահատակաց Հայոց զառն առն քաջութիւն, եւս և զնորամանեակ չարութիւնս Վասակայ առ իւր հայրենի եկեղեցին, ապա խորհրդով հազարապետին իւրոյ կոչեալ վերստին զնախարարս Հայոց ի դուռն և զուրացեալն Վասակ, նորոգ

կացուցեալ մարզպան աշխարհին զոմն Ատրորմիզդ, և անդ ուրեմն ի յանդիմանութեան նախարարացն և կոչեցեալն քահանայից և ուրացելոյն՝ յամենայնի մահապարտ լուցեալ զՎասակ դնէ ի բանտ ընդ նախարարսն և ընդ քահանայսն:

Եւ յամի 454, յորժամ խաղայր Յազկերտ ի վերայ Հոնաց, զնախարարսն նոքին կապանօք հանդերձ երիցամբքն առաքէ յԱպար աշխարհ, զի մի՛ դիւրութիւն ինչ տացի նոցին յուրում աշխարհի. և ի պատերազմին յաղթեալ ի Հոնաց, և համարեալ եթէ աստուածք իւր սպառնացեալ են ինա՝ վասն սպանանելոյ կապեալ քահանայից զկրակ, առաքեաց զայր առ նոսա, և նահատակեաց զնոսա ի նոյն յԱպար աշխարհի, իգիւղն Ռէվան, յետ երից ամաց նահատակութեանց Վարդանանց, որպէս տեսցի ի վարս Ղևոնդեանց:

Ապա յեօթնևտասներրորդում ամի հալածանաց իւրոց վարկուցեալ ի միտս՝ եթէ նախարարքն Հայոց ի վշտաց բանտին ձանձրացեալ դարձցին ի հաւատոց, և երկիրպագցեն արեգական, առաքեաց պատգամաւոր առ նոսա զՄիհրներսէհ հազարապետն. որում եկեալ և տեսեալ զհաստատութիւն հաւատոց նոցին՝ դառնայ և պատմէ Յազկերտի. այլ մինչև էին ապատեալ նախարարքն ի խնդրոյ Շամշապհոյ, տեսանէ Ապար աշխարհի ի նոյն Յազկերտէ, հասանէ սմին իսկ Յազկերտի՝ մահ, և չարաչար բառնի ի կենաց յիննետասներրորդ ամի թագաւորութեան իւրոյ:

(Շարունակելի)

ՍՍԵՂ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

---

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԳՐՈՑ ՎՐԱՑ.

([illegible])

Յաճախ չկրկնելու համար պէտք կը համարիմք այս անգամ յիշեցնել Երկրորդականոն ըսուած գրքերը. վասն զի հոս մէջ բերելիք վկաներնուս միայն ժամանակագրական կարգը պիտի նայինք, և ոչ իբրև ընդունելի յիշած գրքերնուն մեր Աստուածաշունչին՝ մէջ ունեցած կարգը: Այս գրքերուս կարգը Պատմական են Յուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիք և Եզթերայ գրքէն հատուածներ և Դանիէլի մարգարէութեան ԺԳ. և ԺԴ. գլուխները: Մնացեալները, որ են Իմաստութիւն, Սիրաք, Բարուք, և Դանիէլի երրորդ գլուխէն երից մանկանց երգը՝ խրատ և մարգարէութիւն խառն են, և վերջինս աղօթք և գոհաբանութիւն է առ Աստուած: Հիմա տեսնենք թէ նախնի աւանդութիւնք մեզի հասցնող սուրբ և իմաստուն հայրերը առնք իբրև յԱստուծոյ ներշնչեալ սեպելով ինչ վկայութիւններ կուտեն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրն մեր՝ որ սուրբ հաւատոյ հետ Աստուածաշունչ գրքերն ալ իւր նորահաւատ ժողովրդեանը ցուցուցած պիտի ըլլայ անշուշտ, որ իր քարոզութեանցը մէջ քանի որ խօսքին կարգը կպահանջէր նէ՝ Երկրորդականոն գրքերէն վկայութիւններ կառնէր Նախականոններէն առածի պէս, առանց խտրութիւն և որոշում մը ցուցնելու: Նորահաւատ ժողովրդեան Քրիստոնէութիւնը հիմնովին սորվեցնելու համար վարժուն օր ըրած քարոզութիւնները Ագաթան-